

**ԲՈՒՀ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՈՒՂԻՆԵՐԸ
(ԵՄ և ԵԱՏՄ երկրների օրինակով)**

ՔՐԻՍՏԻՆԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացը երաշխավորող պայմաններից մեկը բուհ-կազմակերպություն արդյունավետ փոխգործակցությունն է: Այդ առումով կողմերի համակարգված և շարունակական համագործակցությունը կարող է դառնալ *կրթական, հետազոտական ու լոբիի զարգացման, կազմակերպությունների տնտեսական, նորարարական կարողությունների ընդլայնման հիմնաքար¹, ինչպես նաև՝ պետական ու մասնավոր հաստիքների միջև համագործակցության արդյունավետության բարձրացման նախապայման²:*

Բուհ-կազմակերպություն համագործակցության (այսուհետ՝ ԲԿՀ) ձևավորման և զարգացման առաջնահերթ և ելակետային ուսումնասիրման առարկան կողմերի համագործակցության ուղիները և կառուցակարգերը վերհանելն է և հնարավոր խոչընդոտները հաղթահարելը:

Սույն աշխատանքում համեմատական մեթոդով ներկայացվում են կողմերի համագործակցության կառուցակարգերի տեսակները և դասակարգման հիմքերը **ԵՄ և ԵԱՏՄ տարածաշրջաններում:** Համապատասխանաբար տրվում է համագործակցության հնարավոր կառուցակարգերի և մեխանիզմների տեսական-գիտական դասակարգման ընդգրկուն շրջանակ, և *իրականացվում է կառուցակարգերի ընտրությունը պայմանավորող գործոնների համապարփակ վերլուծություն:*

ԵՄ տարածաշրջանում կողմերի միջև կապերը բնորոշելու համար կիրառվում են հետևյալ եզրույթները՝ համագործակցության ձև (forms), համագործակցության կապուղի (channels), համագործակցության մեխանիզմներ (mechanisms), համագործակցության օղակ/կապեր (links) հասկացությունները:

Եզրույթային անորոշությունը կանխելու նպատակով հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ հստակեցումը: Այսպես՝ *կողմերի միջև համագործակցության կապերի ձևավորման համար առկա են*

¹ St' u Albuquerque E., Lee K., Kruss G., Developing National Systems of Innovation: University–Industry Interactions in the Global South, International Development Research Centre, 2015, էջ 41:

² St' u Larsen K., Bandara D., Esham M., Unantenne R., Promoting University-Industry Collaboration in Sri Lanka: Status, Case Studies, and Policy Options, The World Bank, 2016, էջ 23:

տարբեր կապուղիներ, իսկ վերջիններս գործնականում կիրառվում են որոշակի համագործակցային ձևերի կամ կառուցակարգերի միջոցով:

Հիմք ընդունելով այս սահմանումը՝ ներկայացնենք Կ. դե Ֆունտե-սի և Գ. Դուֆրենիտի դասակարգումը: Հեղինակները առանձնացնում են կողմերի միջև գործընկերության ձևավորման հետևյալ կապուղիները՝ տեղեկատվական (Info channel), ծրագրային (Project channel), մտավոր սեփականության իրավունքի (IPR channel) և մարդկային ռեսուրսների կառավարման (HR channel): Ըստ դասակարգման՝ յուրաքանչյուր համագործակցության կապուղի ներառում է որոշակի փոխգործակցության ձևեր կամ կառուցակարգեր: Ստորև բերված դասակարգումը հնարավորինս խմբավորված ներկայացնում է ոլորտում առկա գիտական սահմանազատումների շրջանակը (տե՛ս աղ. 1)³:

Աղյուսակ 1

ԲԿՀ կապուղիները և կառուցակարգերը

Համագործակցության կապուղիներ Channel	Համագործակցության կառուցակարգեր Forms/Mechanisms
<i>Տեղեկատվություն և վերապատրաստում Info channel</i>	<i>Հրապարակումներ Կոնֆերանսներ Ոչ պաշտոնական հաղորդակցություններ Վերապատրաստումներ</i>
<i>R&D ծրագրեր և խորհրդատվություն Project channel</i>	<i>Պայմանագրային R&D, Համատեղ R&D Խորհրդատվություն</i>
<i>Մտավոր սեփականության իրավունք IPR channel</i>	<i>Տեխնոլոգիական թույլտվություն Արտոնագրեր</i>
<i>Մարդկային ռեսուրսների կառավարում HR channel</i>	<i>Շրջանավարտների զբաղվածության սպահովում</i>

Մ. Չեդիդը նշում է, որ կառուցակարգերը կողմերի միջև ձևավորված փոխգործակցության համակարգեր են, որոնք նոր հարաբերությունների ստեղծման հիմք են⁴:

Համաձայն ՏՀԶԿ դասակարգման՝ գիտություն-կազմակերպություն գիտելիքների փոխանցումը տեղի է ունենում ֆորմալ և ոչ ֆորմալ կառուցակարգերի միջոցով⁵:

³ Տե՛ս **Fuentes De Cl., Dutrénit G.**, Best channels of academia-industry interaction for long-term benefit, *Research Policy* 41, 2012, էջ 1671:

⁴ Տե՛ս **Chedid M., Teixeira L.**, Advanced Methodologies and Technologies in Modern Education Delivery, Chapter 55. The University-Industry Collaboration, Information Resources Management Association, USA, էջ 706:

⁵ Տե՛ս *University-Industry Collaboration, new evidence and policy options*, OECD Publishing, Paris, 2019, էջ 32, <http://www.oecd.org/fr/innovation/university-industry-collaboration-9c1e648-en.htm>

Ֆորմալ կառուցակարգերն են՝ համագործակցային հետազոտությունը (Collaborative research), պայմանագրային հետազոտությունը (Contract research), ակադեմիական խորհրդատվությունը, մտավոր սեփականության իրավունքի գործարքները, հետազոտական շարժունությունը, աշխատանքային շարժունությունը և ակադեմիական բիզնեսները (Spin-off):

Ոչ ֆորմալ կառուցակարգերն են՝ հրապարակումներ, կոնֆերանսներ, ցանցային համագործակցություն, սարքերի և հնարավորությունների համատեղ օգտագործում, դասընթացներ և շարունակական կրթություն:

Կառուցակարգերի դասակարգման և բնութագրման նպատակով իրականացվել է չափորոշիչների խմբավորում և ընդհանրացում, ինչից ելնելով՝ առանձնացվել է Կ. Ֆունտեսի⁶ (1-4) և Մ. Ֆրանկոյի, Շ. Հասեի⁷ (5-6) բնորոշիչների/չափորոշիչների ամբողջությունը: Դրանք են՝ 1. ֆորմալության աստիճան, 2. փոխգործակցության աստիճան, 3. կիրառական արդյունքների ստացման հնարավորություն/ներուժ, 4. գիտելիքի/տեղեկատվության փոխանցման ուղղվածություն, 5. համաձայնագրի ժամկետ, 6. ռեսուրսների տեղակայում:

Այսպես, աղյուսակ 2-ում նշված չափորոշիչների հիման վրա կատարվել է **արդյունաբերական ինկուբատորներ և հրապարակումներ** կառուցակարգերի վերլուծություն (տե՛ս աղ. 2)⁸:

Աղյուսակ 2

ԲԿՂ կապուղիների դասակարգում ըստ չափորոշիչների	ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ	
	ԶՄՓՈՐՈՇԵՂՆԵՐ	ՄԱՌՈՒՑԱԿԱՐԳ
	Արդյունաբերական ինկուբատորներ	Հրապարակումներ
Ֆորմալության աստիճան	Բարձր	Ցածր
Փոխգործակցության աստիճան	Բարձր	Ցածր
Կիրառական արդյունքների ստացում	Բարձր	Ցածր
Գիտելիքի փոխանցման ուղղվածություն	Երկկողմանի	Միակողմանի
Համաձայնագրի ժամկետ	Երկարաժամկետ	Կարճաժամկետ
Ռեսուրսների տեղակայում	Երկկողմանի	Միակողմանի

Նման գործիքային վերլուծությունը հնարավորություն է տալիս հստակ **գնահատելու յուրաքանչյուր կառուցակարգի ազդեցության, գործնական կիրառելիության և նպատակահարմարության ցուցիչները:**

Թեև ԵՄ տարածաշրջանում դասակարգումները բավականին շատ են, ԵԱՏՄ տարածաշրջանում ԲԿՂ 3 հիմնական ուղղություն է նախանշվում՝ **1. կադրերի պատրաստում, 2. շրջանավարտների աշխատանքային հնարավորություններ, 3. գիտություն և նորարարություն**⁹:

⁶ Sté u Fuentes De C., Dutrénit G., Best channels of academia-industry interaction for long-term benefit, Research Policy 41, 2012, էջ 1668:

⁷ Sté u Franco M., Haase H., University–industry cooperation: Researchers’ motivations and interaction channels, J. Eng. Technol. Manage., 2015, էջ 3:

⁸ Աղյուսակը կազմել է հեղինակը:

⁹ Sté u Баскакова Д. Ю., Белаш О. Ю., Рыжов Н. Г. и т. д., Оценка сотрудничества вузов и предприятий, Инновационная Экономика, № 10 (216), 2016, էջ 88:

Համագործակցության նշյալ ուղղությունները պարունակում են տարբեր կառուցակարգեր, որոնցից ԵԱՏՄ երկրներում կիրառելի են՝ ուսանողական և դասախոսական անձնակազմի շարժունությունը, «հետազոտություն և զարգացում» (НИОКР)* ծրագրերի իրականացումը¹⁰, ուսումնական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում գործատուների մասնակցությունը, կազմակերպության պատվերով կադրերի նպատակային պատրաստումը, ուսումնական գործընթացում կադրային և գիտատեխնիկական ներուժի օգտագործումը¹¹:

ԵԱՏՄ երկրներում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ առավել կիրառելի կառուցակարգերից են ուսանողների շարժունությունը՝ ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման միջոցով, և համատեղ հետազոտական ծրագրերի իրականացումը՝ հրապարակումների միջոցով: Ըստ այդմ՝ ուսումնական ծրագրերի մշակման գործընթացում գործատուների մասնակցությունը և ակադեմիական բիզնես գաղափարների կիրարկման ցուցանիշները ցածր են կամ առհասարակ բացակայում են¹²:

Այսպիսով՝ **ԵԱՏՄ տարածաշրջանում բուհ-կազմակերպություն համագործակցությունը մեծապես ուղղված է ուսանողական շարժունության մեխանիզմի կիրառմանը**, մինչդեռ հռչակագրային բնույթի մյուս կառուցակարգերը նվազ կիրառելի են, կամ դրանց կիրառման համար ինստիտուցիոնալ հիմքեր դեռևս չկան: Մեր կատարած ամփոփ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ԵԱՏՄ տարածաշրջանի բուհերում գործում են շրջանավարտների և կարիերայի ուղղորդման կենտրոններ, որոնք առավելապես իրազեկում են շրջանավարտներին թափուր աշխատատեղերի և կարիերայի զարգացմանը նպաստող միջոցառումների մասին: Մինչդեռ ակադեմիական արդյունքի առևտրայնացում ենթադրող կառուցակարգերի կիրառությունը ԵԱՏՄ տարածաշրջանային երկրներում նվազ կիրառելի են կամ առհասարակ բացակայում են:

Անդրադառնալով ՀՀ-ում բուհ-կազմակերպություն համագործակցության կառուցակարգային առանձնահատկություններին՝ հարկ ենք համարում նշել, որ որպես կառուցվածքային ստորաբաժանումներ գործում են կարիերայի և ձեռնարկության կենտրոն/ստորաբաժանումները՝ ամենատարբեր անվանումներով: **Իրականացվել է ՀՀ-ում 5 բուհական**

* Научно-исследовательские и опытно-конструкторские работы= R & D Research & Development=Հետազոտություն և զարգացում

¹⁰ Տե՛ս **Кекконен А. Ј., Сигова С. В.** Развитие моделей сотрудничества высшего образования и бизнеса: европейский и российский опыт, Образование И Инновации, № 3 (209), 2016, էջ 83:

¹¹ Տե՛ս **Сюпова М. С., Бондаренко Н. А.** Основные формы взаимодействия вузов и предприятий, Том 5, Электронное научное издание «Ученые заметки ТОГУ», № 4, 2014, էջ 113-114:

¹² Տե՛ս **Шабаетва С. В., Кекконен А. Ј.** Практическое исследование сотрудничества вузов и бизнеса в России и странах ЕМСОУ, Университетское управление: практика и анализ. Т. 21, № 6, 2017, էջ 95-96:

հաստատությունների (Երևանի պետական համալսարան, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան) **կայքէջերի և տարեկան հաշվետվությունների ուսումնասիրություն**, որից եզրահանգել ենք, որ համանման կենտրոնների գործունեությունն ուղղված է միայն շրջանավարտների «զբաղվածության» ապահովմանը՝ առկա հնարավորությունների մասին պարզեցված հայտարարություններ տարածելու միջոցով: Այնինչ մեծ թվով կառուցակարգեր ՀՀ բուհական համակարգում կիրառելի չեն: ԲԿՀ համագործակցության զարգացման ուղղությամբ քայլեր կատարվել են. մասնավորապես Երևանի պետական համալսարանի ԳԽ 2013 թ. № 2/3.2 որոշմամբ ընդունվեց Ձեռնարկությունների հետ ԵՊՀ համագործակցության ռազմավարությունը, որը ենթադրում էր, որ ԵՊՀ ֆակուլտետներում ստեղծվելու են ձեռնարկությունների հետ համագործակցության խորհուրդներ: Այստեղ ներգրավված են թե՛ գործատուների, թե՛ ֆակուլտետի ներկայացուցիչներ, սակայն վերոնշյալ կառուցակարգերը կիրառվում են բացառապես 2-3 ֆակուլտետներում:

ՀՀ-ում ԲԿՀ լավագույն օրինակներից է «Մինոփսիս Արմենիայի» և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի համագործակցությունը, երբ կողմերը համատեղ աշխատում են թե՛ կադրերի պատրաստման, թե՛ վերջիններիս զբաղվածության և թե՛ համատեղ բիզնես գաղափարների զարգացման և իրականացման վրա:

Կառուցակարգերի ընտրությունը պայմանավորող գործոնների վերլուծություն

ԲԿՀ համատեքստում կատարված համապարփակ վերլուծությունները ցույց են տվել, որ կառուցակարգերի ընտրությունը կարող է պայմանավորված լինել հետևյալ գործոններով՝ **կողմերի մոտիվացիա, ֆինանսական աղբյուրներ, ոլորտային գործառնություն¹³, հարաբերությունների ժամկետներ, տեխնոլոգիայի և գիտելիքի հոսքի ուղղություն¹⁴:**

Ի. Ֆրեիտասը և այլք կազմակերպությունների դեպքում առանձնացնում են նաև կապուղու ընտրության վրա ազդող գործոնների շրջանակը՝ **կազմակերպության չափ, կլանման կարողություն (Absorptive capacity), տեխնոլոգիական բացություն (Technology Openness)¹⁵:**

Վ. Արզան¹⁶, նաև Դ. Էստեն և Մ. Պերկմանը¹⁷ նշում են, որ կողմերի

¹³ Sté u **Fuentes De Cl., Dutrénit G.**, Best channels of academia-industry interaction for long-term benefit, Research Policy 41, 2012, էջ 1668:

¹⁴ Sté u **Chen Y.**, The evolution of university-industry technology transfers in Hong Kong, Technovation 14(7), 1994, էջ 450:

¹⁵ Sté u **Freitas I., Geuna A., Rossi F.**, Finding the right partners: Institutional and personal modes of governance of university-industry interactions, Research Policy 42 (2013), էջ 51:


¹⁶ Sté u **Arza V.S.**, Channels, Benefits and Risks of Public-Private Interactions for Knowledge Transfer: Conceptual Framework Inspired by Latin America, Science and Public Policy, 37(7), 2010, էջ 477:

համագործակցության կապուղիների ընտրությունը և մոտիվացիաների/օգուտների համակցությունը ուղիղ համեմատական են:

Վ. Արգան կողմերի օգուտների և կապուղու ընտրության միջև առկա ուղիղ համեմատական կապը ներկայացրել է համապատասխան գծապատկերի միջոցով (տե՛ս գծ. 1)¹⁸:

Գծապատկեր 1

ԲԿՀ օգուտների և կապուղիների կոմբինացիոն վերլուծություն



Հեղինակը **կազմակերպությունների** համար առանձնացնում է օգուտների 2 տեսակ՝ **արտադրական գործունեությանը վերաբերող և ինովացիոն երկարաժամկետ**, իսկ **համալսարանների** համար առանձնացնում է **ինտելեկտուալ և տնտեսական օգուտները**: Համապատասխանաբար՝ կապուղիների զանազան դասակարգումները խմբավորում է հետևյալ 4 տեսակներում՝ **ավանդական, ծառայությունների, առևտրային և երկկողմանի**: Հիմնվելով վերոնշյալ դասակարգումների վրա՝ Վ. Արգան ներկայացնում է որոշակի կոմբինացիոն վերլուծություն:

Գծապատկերում հատվածները ներառում են (տե՛ս գծ. 1):

1. *Համալսարանների տնտեսական և կազմակերպությունների պասիվ օգուտների համակցություն*: Այս դեպքում կողմերի համար կապուղի է ընտրվել *ծառայությունների* մեխանիզմը: Համագործակցության արդյունքը պայմանավորված է փողի դիմաց գիտական և տեխնոլոգիական ծառայությունների մատուցմամբ, որտեղ գիտելիքի հոսքը տեղի է ունենում համալսարաններից կազմակերպություն:

¹⁷ Sté u D’Este P., Perkmann M., Why do academics engage with industry? The entrepreneurial university and individual motivations, The Journal of Technology Transfer, (2011), էջ 318:

¹⁸ Sté u Albuquerque E., Lee K., Kruss G., Developing National Systems of Innovation: University–Industry Interactions in the Global South, International Development Research Centre, 2015, էջ 167:

2. *Համալսարանների ինտելեկտուալ և կազմակերպությունների պասսիվ օգուտների համակցություն:* Կապուղի է ընտրվել ավանդական մեխանիզմը: Ակնկալվող արդյունքը կապված է շրջանավարտների աշխատանքի ընդունման, հրապարակումների, կոնֆերանսների կազմակերպման հետ: Գիտելիքի հոսքը ուղղորդվում է համալսարաններից դեպի կազմակերպություն:

3. *Համալսարանների ինտելեկտուալ և կազմակերպությունների ակտիվ օգուտների համակցություն:* Կապուղի է ընտրվել երկկողմանի փոխգործակցության մեխանիզմը: Այս դեպքում տեղեկատվական հոսքը երկկողմանի է, և համատեղ ուսուցման հնարավորությունն ավելի մեծ է: Փոխգործակցության արդյունքը կախված է համատեղ հետազոտությունների և զարգացման ծրագրերի իրականացումից:

4. *Համալսարանների տնտեսական և կազմակերպությունների ակտիվ օգուտների համակցություն:* Կապուղի է ընտրվել առևտրային մեխանիզմը: Այս դեպքում համալսարանների նպատակը իրենց գիտական արդյունքն առևտրայնացնելն է:

Կառուցակարգի ընտրությունը պայմանավորող հաջորդ գործոնը **ուղրտային գործառնությունն** է: Մ. Պերկմանը և այլք եզրակացնում են, որ գիտական գործունեության ոլորտը ազդում է կապուղու ընտրության վրա: Այսպես, կենսաբժշկական և քիմիական ոլորտում առավել կիրառելի կապուղիներից են պատենտավորումը և լիցենզավորումը: Մակայն սոցիալական գիտություններում առավել կիրառելի են անհատական համաձայնությունները և աշխատանքային շարժունությունը¹⁹:

Կառուցակարգի ընտրությունը պայմանավորող հաջորդ գործոններից են **հարաբերությունների ժամկետները, տեխնոլոգիայի և գիտելիքի հոսքի ուղղությունը**: Հաշվի առնելով, որ համագործակցության առումով համալսարանները հակված են դանդաղ և մանրակրկիտ աշխատանքի, իսկ կազմակերպությունները՝ արագ և նկատելի արդյունքներ ստանալուն²⁰, անհրաժեշտ է տարանջատել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հարաբերությունները:


Յ. Չուսը ներկայացրել է գծագիր, որում դիտարկում է տեխնոլոգիայի հոսքի և համագործակցության ժամանակահատվածի տարբերությունը՝ դրանք համապատասխանեցնելով եղած կապուղիներին²¹: Կարծում ենք, որ նշյալ գծագիրը ամբողջացնելու համար, բացի տեխնոլոգիայի հոսքի ցուցիչից, կարելի է ընդգրկել նաև գիտելիքի հոսքի ինտենսիվության ցուցիչը (տե՛ս գծ.2):

¹⁹ Տե՛ս **Perkmann M., Tartari V., McKelvey M.** etc., Academic Engagement and Commercialization: A Review of the Literature on University–Industry Relations, Research Policy, 2013, էջ 428:

²⁰ Տե՛ս **Barnes T., Pashby I., Gibbons A.**, Effective University–Industry Interaction: A Multi-Case Evaluation of Collaborative R&D Projects, European Management Journal, 2002, էջ 277:

²¹ Տե՛ս **Chen Y.**, The evolution of university–industry technology transfers in Hong Kong, Technovation 14(7), 1994, էջ 451–452:

ԲԿՀ կապուղիների շրջանակը



Այսպես, եթե կողմերը միտված են միջնաժամկետ համագործակցության և գիտելիքի ու տեխնոլոգիայի միջինացված հոսքի գործարկման, ապա կրնտրվի 2-րդ խմբի կապուղիներից որևէ մեկը: Վերոնշյալ գծապատկերը տեսանելի է դարձնում, թե յուրաքանչյուր կապուղու կիրարկում ինչ ժամանակային միջակայք է ներառում, և ինչպիսին կլինի տեխնոլոգիայի և գիտելիքի հոսքի ինտենսիվությունը:

Կողմերի ընտրության գործընթացի վրա ազդող հաջորդ գործոնը **ֆինանսական աղբյուրներն են:** Քանի որ զարգացող տնտեսությամբ երկրներում համալսարաններն ունեն «կիսապետական» կարգավիճակ, էական նշանակություն են ձեռք բերում համալսարանական գործունեության համար տրամադրվող պետական միջոցները²²: Եվրոպական երկրների փորձը ևս ցույց է տալիս, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետական միջոցներն են: Այս համատեքստում Եվրոպական հանձնաժողովը շարունակական կոչեր է անում R&D ծրագրերում մեծացնել ֆինանսավորման չափաբաժինը²³:

Մասնավորապես, «Հորիզոն 2020» ծրագրի շրջանակում ԵՄ-ն նա-

²² Տե՛ս **Ankrah S., AL-Tabbaa O.**, Universities—Industry Collaboration: A Systematic Review, *Scandinavian Journal of Management*, 2015, էջ 387-388:

²³ Տե՛ս **Boer De, H., File J.**, Higher education governance reforms across Europe. Modern Project Report, *European Center for Strategic Management of Universities*, 2009, էջ 9:

խանջել էր, որ ԵՄ ՀՆԱ-ի առնվազն 3 %-ը պետք է ներդրվի R&D ծրագրերում, և, չնայած կատարված վերլուծությանը, ամբողջ ԵՄ տարածքում 2018 թ. տվյալներով ՀՆԱ-ն R&D ծրագրերում կազմել է 2.19 %²⁴: Համապատասխանաբար, «Հորիզոն Եվրոպա» ռազմավարական ծրագիրը 2021-2027 թթ. համար բուհ-կազմակերպություն համագործակցության զարգացումը համարում է ԵՄ գլխավոր մարտահրավերներից²⁵:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ պետական ֆինանսավորումը նպաստում է **հրապարկումներ** կառուցակարգի ակտիվ կիրարկմանը, իսկ մասնավոր ոլորտի ֆինանսավորմամբ հնարավոր է զարգացնել ինչպես հրապարակումները, այնպես էլ **տեխնոլոգիայի փոխանցում ենթադրող կապուլինները**:

Կազմակերպության չափը հաջորդ կարևոր գործոնն է, որը կարող է էականորեն ազդել կապուլիտ ընտրության որոշման վրա: Առավել մեծ կազմակերպությունները մեծ ֆինանսական ռեսուրսներով և հմտություններով, հակված են երկարաժամկետ համագործակցություն ենթադրող կապուլիտների ընտրությանը, իսկ փոքր կազմակերպությունները ենթադրաբար կշահեն ուսանողների հոսքից, որոնք համալսարանական գիտելիքը կարող են բերել տվյալ կազմակերպություն²⁶:

Կազմակերպությունների բնութագրման համար կիրառվում են երկու հասկացություններ՝ **կլանման կարողությունը և տեխնոլոգիական բացությունը**, որոնք ևս կարող են ազդել կապուլիտ ընտրության վրա: Համաձայն Օքսֆորդի բառարանի մեկնաբանության՝ **կլանման կարողությունը** կազմակերպության նոր գիտելիքի, տեխնոլոգիայի և հետազոտություն ընդունելու ու կիրառելու կարողության չափման գործակիցն է²⁷: Եթե կազմակերպության կլանման կարողության գործակիցը մեծ է, ապա շատ հավանական է, որ կազմակերպությունը հակված կլինի համագործակցելու ինստիտուցիոնալիզացված կառուցակարգերով:

Նույն համատեքստում պետք է դիտարկել նաև **տեխնոլոգիական բացության** գործակիցը, որի չափման ցուցիչը պայմանավորված է կազմակերպության՝ նորարարությունների համար օգտագործվող արտաքին ալիքների քանակով: Ուստի պետք է նշենք, որ որքան մեծ է կազմակերպության հնարավոր այլընտրանքային կապուլիտներ փնտրելու կարողությունը, այնքան մեծ է լինելու նոր կապուլիտների կամ արդեն եղածի օգտագործելիության ցուցիչը²⁸:

²⁴ St u Gross domestic expenditure on R&D (GERD), https://ec.europa.eu/eurostat/_database/view/t2020_20/default/table?lang=en

²⁵ St u University -Industry Collaboration, A Policy Brief from the Policy Learning Platform on Research and innovation, European Regional Development Fund, 2020, էջ 7, https://www.interregeurope.eu/fileadmin/user_upload/plp_uploads/policy_briefs/2020-01-7_Policy_Brief_University-Industry_Collaboration.pdf

²⁶ St u **Bekkers R., Freitas I.**, Analyzing knowledge transfer channels between universities and industry: To what degree do sectors also matter? Research Policy 37 (2008), էջ 1840:

²⁷ St u **The Oxford Review, Encyclopedia of Terms**, <https://www.oxford-review.com/oxford-review-encyclopaedia-terms/encyclopaedia-absorptive-capacity/>

²⁸ St u **Fontana R., Geuna A., Matt M.**, Firm Size and Openness: The Driving Forces of University-Industry Collaboration, paper № 103, SPRU, 2003, էջ 14:

Այսպիսով, վերոնշյալ գործոնները բացահայտելն ու վերլուծելը նպատակ ունեն ավելի տեսանելի դարձնել այս կամ այն կապուղու ընտրության հիմքերը, նախապայմանները և օրինաչափությունները:

ՀՀ-ում կապուղիների ընտրությունը պայմանավորող գործոնային վերլուծությունը կօգնի պատկերացնելու, թե ինչպիսի նախապայմաններ են առկա համագործակցության զարգացման համար: Ըստ այդմ՝ կատարված **համեմատական դիտարկումները ԵՄ և ԵԱՏՄ տարածաշրջաններում առավել ակնառու են դարձնում ԲԿԸ ոլորտում առկա բացերի և խնդիրների շրջանակը**: Ակնհայտ է, որ ԵԱՏՄ տարածաշրջանում այս համագործակցության զարգացումը պետք է մոտարկվի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ուղենիշին և կազմակերպական մշակույթի առանձնահատկություններին:

ՀՀ-ում ԲԿԸ զարգացման և առաջընթացի համար առաջարկում ենք կիրառել եվրոպական հաջողված փորձը՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները.

Համալսարանների համար՝ ՀՀ բուհական համակարգում կարիերայի ուղղորդմամբ զբաղվող կենտրոնների գործունեության վերափոխում և գործելակերպի վերանայում: Մասնավորապես՝ կենտրոնների գործունեության հիմք դարձնել շրջանավարտների կամ ուսանողների **աշխատանքային գործունակության** բարձրացումը: Դա կարող է դրսևորվել ինչպես *պետական/մասնավոր կազմակերպությունների հետ ֆորմալ/ոչ ֆորմալ համաձայնությունների շնորհիվ կադրային շարժունությունը զարգացնելով*, այնպես էլ *ուսանող/շրջանավարտների բիզնես գաղափարների կամ ակադեմիական արդյունքների առևտրայնացման համար անհրաժեշտ իրավական և գործիքային մեխանիզմներ ներդնելով*: Օրինակ՝ պիլոտային տեխնոլոգիական պարկեր ստեղծելը կարող է դառնալ օրինաչափություն բուհական համակարգում և նպաստել ՀՀ տնտեսական ու տեխնոլոգիական զարգացմանը:

Կազմակերպությունների համար՝ փոխգործակցության ակտիվացում՝ հիմք ընդունելով երկուստեք կադրային շարժունության հնարավորությունը: Մասնավորապես՝ գործատուների ներգրավումը ուսումնական ծրագրերի մշակման գործընթացում, փոխադարձ այցերի, հանդիպումների կազմակերպումը և սարքերի ու հնարավորությունների համատեղ օգտագործումը կարող են դառնալ ՀՀ-ում ԲԿԸ զարգացման նոր մշակույթի սկիզբը:

Կատարված հետազոտությունից եզրակացնում ենք, որ կրթական համակարգում բուհ-կազմակերպություն համագործակցության բարելավելն անհրաժեշտություն է: Կադրեր պատրաստելը բուհական համակարգում պետք է ելնի **նպատակայնության չափանիշից**՝ առավելագույնս բավարարելու վաղվա աշխատաշուկայի պահանջները: Անհրաժեշտ է հստակեցնել գիտելիքահենք կառավարմամբ նպատակայնության չափանիշները, որոնց միջոցով ըստ բնագավառների մասնագետ կադրերի

պատրաստումը պետք է պլանավորվի տնտեսության կառուցվածքային փոփոխություններին համահունչ: Ուստի բուհ-կազակերպություն համագործակցության զարգացումը կարող է դառնալ ինչպես երկրի գիտատեխնիկական և ակադեմիական առաջատարության հիմք, այնպես էլ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նախապայման:

Բանալի բառեր - գիտություն և բիզնես, համագործակցության կառուցակարգեր, կադրային շարժունություն, տեխնոլոգիայի և գիտելիքի փոխանցում, ակադեմիական բիզնես, ինովացիա

КРИСТИНЕ НИКОГОСЯН – Структуры и пути сотрудничества вузов и предприятий (На примере стран ЕС И ЕЭС). – В статье изучаются типы и классификация механизмов в сфере партнёрства вузов и предприятий в регионах ЕС и ЕЭС. Сравнительные наблюдения обозначили спектр проблем управления в этой области в Армении. Чтобы сделать названные вопросы более практичными, была проанализирована практика пяти наших вузов в сфере сотрудничества. Интеграция факторов, определяющих выбор механизмов, позволяет выбрать канал, наиболее удобный в заданной временной перспективе и доступных условиях ресурса.

Исследование подводит к выводу, что армянская практика партнёрства между университетами и организациями должна претерпеть системные преобразования в рамках структурно-функциональной перспективы.

Ключевые слова: наука - бизнес, структуры сотрудничества, мобильность персонала, передача технологии и знания, академический бизнес, инновация

KRISTINE NIKOGHOSYAN – The Mechanisms and Links of the University-Organization Partnership (on the example of the EU and EEU countries). – The purpose of the article is to study and analyze the classifications and the types of University-Organization Partnership mechanisms in the EU and EEU regions. Comparative observations of mechanisms in these regions make visible the range of gaps and problems in the Republic of Armenia. In order to make the above-mentioned issues more practical, the practice of the 5 higher educational institutions of RA in the sphere of the University-Organization Partnership was analyzed. Accordingly, the integration of the factors which determine the choice of mechanisms, makes it possible to choose the channel that will be more convenient in the given time perspective and available resource conditions.

The conducted research allows us to conclude that the Armenian practice of university-organization partnership has to be under systemic transformations in the framework of structural and functional perspectives.

Key words: science – business, cooperation channels, personnel mobility, technology – knowledge transfer, academic business, innovation

Ներկայացվել է՝ 28.07.2020

Գրախոսվել է՝ 14.08.2020

Ընդունվել է տպագրության՝ 25.09.2020